

Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանը հանդիպել է Կոչ և Ուջան համայնքների բնակիչների հետ

28.10.2018

ՀՀ Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանը հոկտեմբերի 28-ին հանդիպել է մարզի Ուջան և Կոչ համայնքների բնակիչների հետ և լսել նրանց խնդիրները:

Ուջան համայնքում մարզպետ Դավիթ Գևորգյանը և մարզպետի տեղակալ Գառնիկ Աթանեսյանը ծաղիկներ են խոնարհել զորավար Անդրանիկի հուշարձանի մոտ, ապա բնակիչների ուղեկցությամբ քայլել համայնքի մշակույթի տուն, որտեղ մարզպետը ներկայացրել է տնտեսական զարգացման ու նոր ներդրումների հետ կապված իր տեսլականը, պատկերացումները և պատասխանել է բնակիչներին հուզող հարցերին:

Բնակիչները մարզպետին դիմեցին խմելու ջրի կանոնակարգված մատակարարման, «Հյուսիս-հարավ» ավտոճանապարհի առաջացրած անհամարությունների, գյուղատնտեսության արդյունավետ կազմակերպման համար ագրոնոմների ինստիտուտի ձևավորման, համայնքում կրթական, սպորտային, մշակութային կյանքի աշխուժացման և այլ խնդիրներով:

Կոչ համայնքում մարզպետ Դավիթ Գևորգյանը ճեպագրույց ունեցավ բնակիչների հետ: Քննարկվող հիմնական խնդիրը գյուղամիջյան ճանապարհների անմխիթար վիճակն էր, որի բարելավման վերաբերյալ մարզպետ Դավիթ Գևորգյանը տվեց հանձնարարականներ:

Կոչ համայնքի առջև ծառացած հաջորդ խնդիրը գյուղի որոշ թաղամասերում շուրջ մեկ տասնամյակ խմելու ջրի անհասանելիությունն էր: Մարզպետ Դավիթ Գևորգյանը բնակիչներին տեղեկացրեց, որ խնդիրը մարզպետարանի ուշադրության ներքո է, արդեն իսկ ձեռնարկվել են քայլեր, և խնդրի լուծումը ընթացքի մեջ է: Այնուհետև մարզպետը շրջայց կատարեց համայնքի դպրոցում և քննարկեց կրթության կազմակերպման հրատապ հարցեր: